ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«16» մայիսի 2017 թվականի № 68-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի, 54-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով հանքավայրի շահագործման նախագծի 2017 թվականի փետրվարի 14-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» թիվ ԲՓ 13 և 2017 թվականի հունվարի 24-ի «Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության փորձաքննության» թիվ 100 փորձաքննությունների դրական եզրակացությունները, հաշվի առնելով Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը, «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2017 թվականի ապրիլի 27-ի թիվ Ֆ-127/17 գրությունը և «Կիր -քար» ՍՊԸ-ի 2017 թվականի ապրիլի 27-ի թիվ 11 դիմումը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Կիր -քար» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) 50 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման թիվ ՇԱԹ-29/559 թույլտվությունը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջաջուռի կրաքարերի հանքավայրի ընդերքի տեղամասը՝ 1.X=4529084 Y=8412416, 2.X=4529132 Y=8412387, 3.X=4529150 Y=8412406, 4.X=4529247 Y=8412444, 5.X=4529278 Y=8412494, 6.X=4529324 Y=8412628, 7.X =4529293 Y=8412720, 8.X=4529270 Y=8412820, 9.X=4529157 Y=8412792, 10.X=4529068 Y=8412803, 11.X=4528980 Y=8412770, 12.X=4529030 Y=8412617, 13.X=4529220 Y=8412625, 14.X=4529190 Y=8412536, 15.X=4529120 Y=8412505, 16.X=4529084 Y=8412416 (տրված են՝ WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված տարածքում արդյունահանման աշխատանքներ կատարելու համար, հատկացնելով՝ 596 409 մ^3 մարվող պաշար և լեռնահատկացման թիվ L-559 ակտը՝ 1.X=4529083 Y=8412415, 2.X=4528979 Y=8412771, 3.X=4529068 Y=8412804, 4.X=4529270 Y=8412820, 5.X=4529326 Y=8412628, 6.X=4529264 Y=8412452, 7.X=4529132 Y=8412386 (տրված են՝ WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված 10.5 հա տարածքով:

2. Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 1-30 տարիների համար 9677,42մ^3 , իսկ 31-50 տարիների համար 15304,32 մ^3 պաշար:

3. Ընդերքի գործակալության պետին՝

1) պատրաստել սույն հրամանի 1-ին կետում նշված՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջաջուռի կրաքարերի հանքավայրի օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ-559 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր), ծանուցել դիմումատուին և հրավիրել վերջինիս 10-օրյա ժամկետում պայմանագիրն իր կողմից վավերացնելու (ստորագրելու և կնքելու) համար.

2) ընկերության կողմից պայմանագիրը վավերացվելուց հետո 10 օրվա ընթացքում, ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքի վճարման անդորրագրի ներկայացումից անմիջապես հետո, ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը.

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրն իր կողմից չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած.

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին - ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

5 Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո 2 ամսվա ընթացքում:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ